2011, ԴԵԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 23 (355)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*1 դեկտեմբերի* **Մանկական «Եվրատեսիլ 2011»-ի մասնակիցներին**



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ա-մենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց մանկական «Եվրատեսիլ 2011» մրցույթի մասնակիցներին:

Նորին Սրբությունը, ողջունելով «Եվրատեսիլի» պատանի մասնակիցների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Եվրոպայի տարբեր երկրներից Հայաստան ժամանած երեխաներին ծանոթացրեց հայ ժողովրդի պատմությանը, ամենայն հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

«Վստահ ենք, որ բոլորդ էլ ուրախ ու խանդավառ եք: Համերգի ժամանակ տարբեր բարձունքներ պիտի նվաճեք: Ցանկանում եմ, որ ձեր մեջ ուրախությունն անպակաս լինի՝ անկախ նրանից, թե ինչ բարձունքի պիտի հասնեք, որովհետեւ արդեն իսկ բարձունք եք նվաճել՝ մասնակցելով այս մրցույթին»,- նշեց Վեհափառ Հայրապետը:

Այնուհետեւ Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց պատանիներին, որ վաղ տարիքում այդքան ճիգ, ջանք եւ աշխատանք են ներդրել՝ իրենց տաղանդն ի ցույց բերելու եւ գեղեցիկ բարձունքներ նվաճելու:

Հանդիպման ավարտին պատանիներն այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ՝ ծանոթանալով հայ ժողովրդի ազգային-հոգեւոր արժեքներին:

*10 դեկտեմբերի* **Լիբանանի նախագահին**



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիբանանի Հանրապետության նախագահ Միշել Սլեյմանին՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով Լիբանանի նախագահի այցը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր կենտրոն, անդրադարձավ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հիմնադրման պատմությանը եւ առաքելությանը հայ ժողովրդի կյանքում: *«Մեր ազգային եւ եկեղեցական պատմությունը հարուստ է մեր երկու ժողովուրդների բարեկամության վերաբերյալ վկայություններով: Եվ ուրախ ենք, որ այսօր հարաբերությունները Հայաստանի եւ Լիբանանի միջեւ դարավոր այդ բարեկամության ոգուն համահունչ են զարգանում, վերականգնվում են փոխայցելությունները»*,- ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ընդգծելով, որ Լիբանանն առանձնահատուկ տեղ է գրավում հայ ժողովրդի հոգում:

Իր խոսքում Նորին Սրբությունը, ի դեմս Լիբանանի նախագահի, շնորհակալություն հայտնեց Լիբանանի իշխանություններին եւ ժողովրդին՝ հայոց մեծ ողբերգությունը՝ Ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման գործընթացին ցուցաբերվող զորակցության համար:

Իր հերթին Լիբանանի նախագահը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար, ապա գնահատանքով անդրադարձավ Լիբանանում հայերի պատմական ներկայությանը եւ կարեւոր ծառայությանը՝ երկրի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքում: Պրն Միշել Սլեյմանը նաեւ հույս հայտնեց, որ Նորին Սրբությունն առաջիկայում կայցելի Լիբանան:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ Հայ Եկեղեցու միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններին: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված օրհնի եւ հարատեւ զորացնի բարեկամությունը երկու ժողովուրդների:

Այնուհետեւ Նորին Սրբությունը նախագահին առաջնորդեց Մայր տաճար եւ Մայր տաճարի թանգարան:

## Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Դեկտեմբերի 4-ին Մայր տաճարում Պատարագի ընթացքում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն եւ օծում՝ ձեռամբ Տ. Նաթան եպս Հովհաննիսյանի:

Նաթան սրբազանը քահանայության կոչեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի չորս սարկավագի: Նախորդ օրը՝ երեկոյան ժամերգությունից առաջ, կատարվեց քահանայության պատրաստվողների ընծայման կարգը, որի ընթացքում սարկավագները վկայեցին իրենց հավատքի ուղղափառությունը եւ կատարեցին հավատարմության ուխտը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն:

Այնուհետեւ ձեռնադրող սրբազան հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ մասնավորաբար իր խրատներն ու խորհուրդներն ուղղելով նորաօծ հոգեւորականներին:

Նույն օրը՝ երեկոյան ժամերգության ժամանակ, կատարվեց նաեւ վեղարի տվչության արարողություն: Չորս նորընծաներից Տ. Զաքարիան եւ Տ. Ահարոնը վեղար ստացան՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

Ձեռնադրության հաջորդ օրը՝ դեկտեմբերի 5-ին, նորաօծ հոգեւորականներին ընդունեց Ամենայն



Պատարագի ընթացքում սրբազան հայրը մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը՝ շնորհելով հոգեւոր նոր անուններ. Տիգրան սարկավագ Բաղումյանը վերակոչվեց Տ. Զաքարիա քահանա, Միեր սարկավագ Եսայանը՝ Տ. Ենովք քահանա, Արթուր սարկավագ Սարգսյանը՝ Տ. Հուսիկ քահանա, Արթուր սարկավագ Շախվերդյանը՝ Տ. Ահարոն քահանա:

Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը երիտասարդ եկեղեցականներին տվեց իր օրհնությունը, հորդորներն ու պատգամները:

Քառասնօրյա աղոթական շրջանից հետո նորընծա հոգեւորականները ծառայության կկոչվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր կառույցներում եւ թեմերում:

## Կոնֆերանս Մոսկվայում

Նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու նախաձեռնությամբ, Մոսկվայում գումարվեց «Դավանանքի ազատություն. խտրականության եւ քրիստոնյաների հալածանքների հիմնախնդիրը» խորագրով կոնֆերանսը:

Կոնֆերանսի ընթացքում քննարկվեցին քրիստոնյաների նկատմամբ տարբեր երկրներում կիրառվող հալածանքների եւ հետապնդումների հիմնահարցեր:

Կոնֆերանսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացրեցին Ամերիկայի հայոց արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը եւ Հայաստանի Աստվածաշնչյային ընկերության նախագահ Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը:

## Կարգալույծ է հռչակվել Տ. Աբել աբեղա Աբրահամյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Աբել աբեղա Աբրահամյանը (Իրաքի հայոց թեմ)՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին իր դիմումի հիման վրա:

Այսուհետ նա կդասվի աշխարհականների շարքը՝ Էդգար Աբրահամյան ավազանի անունով:

## Օծվեց Ստավրոպոլի երկրամասի Գեորգիեւսկ քաղաքի Սբ Գեւորգ եկեղեցին



Սույն թվականի նոյեմբերի 29-ին, ձեռամբ Հարավային Ռուսաստանի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Մովսես եպս Մովսիսյանի եւ Կոտայքի թեմի առաջնորդ գերշ. Տ. Առաքել եպս Քարամյանի, օծվեց Գեորգիեւսկի Սբ Գեւորգ եկեղեցին, որի բարերարներն էին Սերգեյ Դուեւը, Իգոր Ավանեսյան, Վալերի Ցուցունյանը, Վլադիմիր Հարությունյանը, ինչպես նաեւ մի շարք հավատացյալ հայորդիներ:

Վեհափառ Հայրապետի օրհնությունը ժողովրդին փոխանցեց Առաքել սրբազանը, իսկ Մովսես սրբազանը ներկայացրեց եկեղեցու կարեւորությունը եւ իր գնահատանքն ու օրհնությունը բաժանեց բոլոր բարերարներին, հավատավոր ժողովրդին եւ հատկապես բարձր գնահատեց Սբ Գեւորգ եկեղեցու հովիվ Վարդան քահանա Հունանյանի նվիրական ծառայությունը:

Գեորգիեւսկ քաղաքը հիմնվել է 1777 թ.: Հիմնադրումից հետո հայերն այստեղ են բնակություն հաստատել Արեւմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից, մասնավորապես՝ Վանից, Մուշից, Համշենից: 1780-90-ականներին քաղաքում կառուցվել է եկեղեցին, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին քանդվել է համայնավարների կողմից (1942 թ.):

Ներկայումս քաղաքում ապրում է մոտ 15-20 հազար հայ:

*Հարավային Ռուսաստանի հայոց թեմի մամլո դիվան*

## Երկրաշարժի 23-րդ տարելիցը վիրահայ համայնքում

Դեկտեմբերի 7-ին Թբիլիսիի Սբ Էջմիածին եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի անմեղ զոհերի:

Հոգեհանգստի արարողությանը ներկա էին երկրաշարժի զոհերի հարազատները, Վրաստանում ՀՀ դեսպանության աշխատակիցներ, Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրթյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, գրող-թարգմանիչ Գիվի Շահնազարը, վիրահայ մտավորականության ներկայացուցիչներ, հավատացյալներ:

Երկրաշարժի զոհերի հիշատակին հարգանքի իրենց տուրքը մատուցեցին Վրաստանի անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալ Թամար Կինծուրաշվիլին, Վրաստանի վերաինտեգրման փոխնախարար Ջվիադ Ջվիադաուրին:

Հավաքվածներին ուղղված իր խոսքում Վազգեն սրբազանը նշեց, որ թեեւ 1988 թվականի դեկտեմբերի 7-ը հայ ժողովրդի պատմության սեւ էջերից մեկն է, սակայն այն նաեւ մեր ժողովրդի հոգու անպարտելիության, ցավին ընդդիմանալու եւ վերստին հառնելու ապացույց է: Սրբազան հայրը կարեւորեց այդ օրերին Հայաստանին եւ հայ ժողովրդին մենակ չթողնելու հանգամանքը. աշխարհը սատար կանգնեց հարվածի ծանրությունից ցնցված հայ ժողովրդին, եւ այդ սատարողներից առաջինը Վրաստանն ու վրաց ժողովուրդն էր, որը բարեկամի ջերմությամբ, դրացու անմիջականությամբ հասցրեց առաջին օգնությունը, ընդգրկվեց երկրաշարժի փլատակներից մարդկանց փրկության աշխատանքներին, ընդունեց ու դարմանեց հազարավոր տուժածների ու անապաստան մնացածների: Դա է իսկական բարեկամի, իսկական հարեւանի վերաբերմունքը,- հավելեց վիրահայոց հոգեւոր առաջնորդը:



Ապա Թբիլիսիի Վանո Սարաջիշվիլու անվան կոնսերվատորիայի փոքր դահլիճում կայացավ Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Վիլի Վայների «Դաշնամուրային պիեսների» համերգ-շնորհանդեսը: Ստեղծագործությունները կատարեց Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստուհի, միջազգային մրցույթների դափնեկիր Անահիտ Ներսիսյանը: Համերգի ժամանակ կատարվեցին նաեւ հայտնի հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Համերգի հաջորդ օրը՝ դեկտեմբերի 8-ին, Թբիլիսիի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի «Գալուստ Գյուլբենկյան» սրահում կայացավ հայ արվեստասեր հասարակայնության ներկայացուցիչների հանդիպումը կոմպոզիտոր Վիլի Վայների եւ դաշնակահարուհի Անահիտ Ներսիսյանի հետ:

Հանդիպման վերջում Վազգեն եպս Միրզախանյանը գոհունակություն հայտնեց արվեստի մեծավարպետ գործիչներին՝ «Հայարտուն» այցելելու եւ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպելու կապակցությամբ:

*«Հայարտուն» մշակույթի կենտրոնի մամլո դիվան*

## Ղարաբաղի անկախության 20-ամյակը Հնդկաստանում

2011 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի օրը, հնդկահայ համայնքը եւ Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանը մեծ հանդիսությամբ տոնեցին Ղարաբաղի անկախության 20-ամյակը, որը կրում էր **«Ղարաբա՛ղ, ես քեզ սիրում եմ»** խորագիրը:

Բեմահարթակում Մարդասիրականի սաներն Արցախի հանդեպ ունեցած իրենց սերն արտահայտեցին հայրենասիրական երգերի կատարումով եւ ասմունքով:

Ձեռնարկն ավարտվեց հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տեր Խորեն վրդ. Հովհաննիսյանի օրհնության խոսքով: Հայր սուրբը շնորհավորեց ներկաներին՝ Արցախի անկախության առիթով՝ այն համայն հայության համար շատ թանկ համարելով. «Ղարաբաղի ազատագրումը եւ անկախության հռչակումը բացառիկ պատմական կարեւորություն եւ նշանակություն ունեն աշխարհասփյուռ հայության համար: Ցեղասպանություն ապրած եւ հայրենազրկված ժողովրդի միջից, ղարաբաղյան հաղթանակով, պարտվողի եւ կորցնողի կարծրատիպը մեկընդմիշտ ջնջվեց: Մեր մեջ բույն դրած նահատակ հայի կերպարը խորտակվեց, եւ փարոսի նման հառնեց հաղթող, պահանջատեր հայը՝ Միացյալ Հայաստանի տեսլականով…»:

Օրվա առիթով Սուրբ Նազարեթ եկեղեցու վարչությունը կազմակերպել էր տոնական հյուրասիրություն:

*Հայոց մարդասիրական ճեմարան*

## «Հայը եւ իր երգը» մանկական երգերի ժողովածու




Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հրատարակել է Սիլվա Լ. Տեր-Ստեփանյանի եւ Կոմիտաս Գեւորգյանի հեղինակած «Հայը եւ իր երգը» մանկական երգերի ժողովածուն:

Երգարանում ներառված է ազգային-եկեղեցական տոներին, բարեպաշտական սովորություններին, հայոց պատմության նշանավոր դեմքերին ու դեպքերին, ազգային խորհրդանիշներին նվիրված քառասուներկու երգ՝ մանուկների համար դյուրընկալելի եղանակներով:

Գրքի հավելվածում տեղ են գտել երգերի արեւմտահայերեն տեքստերն ու երգերի վերաբերյալ որոշ մեկնաբանություններ: Նոտագրքի արեւելահայերենի փոխադրումը եւ նոտագրումն իրականացրել են կենտրոնի աշխատակիցներ Հասմիկ Աբրահամյանը եւ Ֆլորա Հակոբյանը: Խմբագիրը կենտրոնի տնօրեն Վարդան աբեղա Նավասարդյանն է:

Երգարանը նախատեսված է նախադպրոցական հաստատությունների սաների եւ հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտների համար:

## Ս. Թադեոս եւ Ս. Բարթողիմեոս առաքյալների տոնը

Դեկտեմբերի 3-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին տոնախմբեց հայոց առաջին լուսավորիչներ Ս. Թադեոս եւ Ս. Բարթողիմեոս առաքյալների տոնը: Այս առիթով Մայր տաճարում մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը:

Տոնի առիթով, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, նախատոնակին Մայր տաճար էին բերվել Գանձատանը պահվող առաքյալների մասունքները: Հոգեւորականաց դասն ու Մայր Աթոռ ուխտի եկած բազմաթիվ հավատացյալներ իրենց խոնարհումը բերեցին առաքյալների սրբազան մասունքներին՝ առ Աստված աղոթք բարձրացնելով եւ հայցելով հայոց առաջին լուսավորիչների բարեխոսությունը:

Իր քարոզում պատարագիչ տեր հայրը հորդորեց ներկաներին սուրբ առաքյալների մասունքների առջեւ կանգնած նորոգել իրենց ուխտը եւ առաքյալների նմանությամբ թե՛ անձնական, թե՛ ընտանեկան, թե՛ հասարակական կյանքում մնալ հավատարիմ քրիստոնյայի իրենց կոչմանը: «…Նրանք նահատակվեցին, եւ բազմաթիվ հոգիների դարձի պատճառ եղան, մենք էլ մեր հերթին պարտավոր ենք կենդանի կերպով նահատակվել՝ մեր քրիստոնեական պարտքը կատարելով… Թող առաքելոց բարեխոսությունն առատորեն հեղեղի մեզ, եւ Աստծո անսպառ զորությունն իջնի մեր ժողովրդի վրա, մեր հայրենիքի վրա եւ մեր Սուրբ Եկեղեցու վրա»,- նշեց Ասողիկ քահանան:

## ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ ՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ս. Բարթողիմեոս առաքյալի անունը հավերժացնող Ս. Բարթողիմեոս վանքը գտնվում է Վասպուրականի Աղբակ գավառում՝ համանուն գետի աջ ափին՝ արհեստական բարձր բլրի վրա (Ներկայիս Թուրքիայի Հանրապետության Բաշկալե գավառակում): Վանքը կառուցվել է ս. Բարթողիմեոսի նահատակման վայրում՝ Արեփանոս քաղաքում: Ս. Բարթողիմեոս վանքի կառուցման ժամանակի ու կառուցողի մասին մեր մատենագրության մեջ պահպանվել են մի շարք հետաքրքիր ավանդություններ ու պատմություններ, որոնցից է նաեւ Արեփանոսում առաքյալի գործած հրաշքներից մեկի պատմությունը: Ըստ ավանդության՝ Արեփանոսում ս. Բարթողիմեոսը մի ծերունու է տեսնում, որը ողբում էր իր միակ զավակի մահվան պատճառով: Առաքյալի հրամանով երեխային տանում են գետի մոտ ու երեք անգամ Հիսուս Քրիստոսի անունը տալով՝ ջրով լվանում են, եւ փոքրիկը հարություն է առնում:

Ս. Բարթողիմեոս վանքի կառուցման հետ կապված՝ երկու նշանավոր ավանդություն գոյություն ունի: Ըստ դրանցից մեկի՝ վանքը կառուցել է հայոց Սանատրուկ թագավորը՝ Ա-Բ դարերում: Ս. Բարթողիմեոսի նահատակությունից հետո Սանատրուկ թագավորը բորոտությամբ է հիվանդանում: Նրան խորհուրդ են տալիս Բարթողիմեոսի նահատակման վայրից բխող Կաթնաղբյուրի ջրով լվացվել: Թագավորն այդ Կաթնաղբյուրի ջրով լվացվելուց հետո բժշկվում է, եւ որպես շնորհակալության արդյունք՝ հրամայում է հենց այդ վայրում կառուցել վանք: Իսկ մյուս ավանդության համաձայն՝ վանքը կառուցել է հայոց Տրդատ Գ թագավորի որդին, ով նույնպես տառապում էր բորոտությամբ: Վերջինս ս. Բարթողիմեոս առաքյալի բարեխոսությամբ մաքրվում է բորոտությունից, որից հետո սրբի գերեզմանի վրա կառուցում է այս վանքը՝ Դ դարում, որի բացմանն այցելում են Տրդատ թագավորը եւ Գրիգոր Լուսավորիչ հայրապետը:

Առաքյալի անունը կրող այս վանքը թե՛ դրսից, թե՛ ներսից շատ գեղեցիկ է: Երեք կողմից շրջապատված է աշտարակավոր պարիսպներով, տաճարը կառուցված է սրբատաշ քարերով, սյունազարդ է, ունի քանդակներ: Եկեղեցին ներքուստ բաղկացած է երեք մասից. ավագ Սեղան, որը մեջտեղում է, աջակողմյանը՝ Հազարապետի սեղանն է, իսկ ձախ կողմում փոքրիկ մատուռ է, որտեղ էլ գտնվում է Բարթողիմեոսի գերեզմանը:

*Շարունակությունը՝ էջ 4*

*Լրատվական նյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԱՀԱՊԵՏ Ա ԵՂԵՍԱՑԻ (1691-1705)

*Սկիզբը՝ թիվ 14-22*

Մի պահ թողնենք Ավետիքին բանտարկության մեջ եւ անդրադառնանք մի քանի այլ խնդիրների:

Գողթն գավառի Շաղկերտ գյուղի տանուտեր Մալխասը, պարտք մնալով գյուղի հաշվին, գյուղացիների ճնշումից ազատվելու համար դիմում է Նախիջեւանի կառավարիչ Մուհամմեդ Ռիզա խանին եւ առաջարկում իր գեղեցիկ կույս աղջիկը կնության տալ նրա որդի Մուրթեզաղուլուն, եթե նա իրեն պաշտպանի գյուղացիներից: Խանը համաձայնում է, եւ գալիս են աղջկան Երեւան տանելու: Կատարյալը (թուրքերեն՝ Թամամը) փորձում է ընդդիմանալ, սակայն նրան ուժով տանում են Երեւան, որտեղ ամուսինը նրան զարդարում է ոսկով եւ արծաթով: Աղջիկը չէր կամենում իսլամանալ եւ պատրաստ էր հանուն քրիստոնեության զոհվել: Տունը Հրազդանի ափին էր: Նա պատուհանից դուրս է նետվում եւ ուշքի գալով կամուրջն անցնում է եւ ուղեւորվում դեպի Կարբի: Նորագյուղն ու Կարբին անցնելով՝ հասնում է Եղվարդ, որտեղ խոստովանում է եւ հաղորդվում: Հետո շարունակում է իր ճամփան: Եղվարդի տանուտեր Սահակը, իբրեւ թե Նախիջեւանի խանի վրեժխնդրությունից վախենալով, երկու թուրքերի հետ հասնում է նրա հետեւից, զարդերից զրկում, կապում, որից հետո



թուրքերից մեկի խանջանով խեղդում: Մալխասը գալիս է եւ մեծ ու հանդիսավոր հուղարկավորություն կատարում: Նրան՝ որպես վկայուհու, թաղում են Եղվարդի եկեղեցու բակում: Դա տեղի ունեցավ 1691 թվին:

Նույն՝ 1691 թվին տեղի ունեցավ նաեւ սղերդցի Պողոս սարկավագի նահատակությունը: Մի իսլամացած ասորու, որը նախկին նեստորական էր, բերում են հայոց եկեղեցի, որ ուրացյալի քար նետի եկեղեցու վրա: Նրան հետեւող ամբոխն էլ սկսում է քարեր նետել եկեղեցու վրա: Տոնական օր էր, եւ եկեղեցին լեցուն էր ժողովրդով: Այդ ժամանակ նորապսակ սարկավագ Պողոսը նետվում է դուրս՝ ամբոխը ցրելու համար, բայց պատահաբար տապալում է մահմեդականների թուղն ու դրոշը: Նրան ձերբակալում եւ հանձնում են դատավորին, որը նրա կյանքը փրկելու համար առաջարկում է ուրացություն: Պողոսը հրաժարվում է, եւ նրան երկար ժամանակ պահում են բանտում, իսկ այնուհետեւ ցցին կապելով՝ կրակի են տալիս: Ըստ Մ. Օրմանյանի՝ նրա մահն ընկնում է մոտավորապես ապրիլի 12-ին: Նրա ոսկորները հավաքում են եւ հողին հանձնում Սղերդի եկեղեցու բակում:

Նահատակվեց նաեւ սարկավագ Սարգիս Կարսեցին, որի մկրտության անունը Սափար էր: Նա 18 տարեկան էր եւ մուշտակի առեւտրով էր զբաղվում: Մի անգամ նա իսլամական կրոնին առնչվող դիտողություն է անում մի թուրքի, եւ վերջինս այդ առիթն օգտագործում է՝ փորձելով նրան վախեցնել եւ ծրի ապրանք ստանալ: Սարգիսը դիմադրում է, իսկ նա էլ աղմուկ է բարձրացնում, թե սարկավագը հայհոյել է իր կրոնը: Նրան տանում են դատավորի մոտ, որն ազատության դիմաց ուրացություն է առաջարկում: Գործը



հասնում է կուսակալին, բայց Սարգիսը մնում է անդրդվելի: Նրան նահատակում են հայոց 1141 թվին, այլ խոսքով՝ 1692 թվի հոկտեմբերի 15-ին:

Նահատակվեց նաեւ դարբին Նիկողայոս Պրուսացին, որն Աթաջանի եւ Շուշանի որդին էր: Ամուսնացած էր եւ Աննա անունով մի աղջիկ ուներ: Բարետես էր, որի համար դրացի թուրքերը նրան կրոնափոխության առաջարկ էին արել 1689 թվին: Գործը փակվել էր խնջույքի սեղանով: 1694 թվին նրան իսլամացնելու նոր փորձեր արվեցին: Նիկողայոսը խստիվ հրաժարվեց: Եվ խանութպաններն սկսեցին աղաղակել, թե իրենց առջեւ ուրացել է: Հակառակ վկայություն տվողներ էլ եղան, բայց սուտ վկայությունները հարգվեցին, եւ Նիկողայոսին բանտարկեցին: Նա 10 օրվա ընթացքում խոստովանեց եւ հաղորդվեց մի քահանայի կողմից, իսկ դատավորը նրան գլխատման դատապարտեց: Տեսնելով նրա վիճակը՝ անգամ մայրը, մորաքույրը եւ զոքանչը նրան առաջարկեցին ընդունել իսլամը, բայց նա հրաժարվեց: Սուքիաս եպիսկոպոսն ստացավ նրա մարմինը թաղելու թույլտվությունը, հայերի եւ հույների մեծ բազմությամբ այն հողին հանձնեց մի նշանավոր վայրում: Սարգիսը նահատակվեց 1694 թվի մարտի 14-ին՝ Մեծ պահքի չորրորդ չորեքշաբթի օրը:

Նահատակների շարքը մտավ նաեւ Գրիգոր Ջուղայեցին, որ Լույս Գրիգոր մականունով է հայտնի: Նա տակավին 18 տարեկան էր եւ ծառայում էր մի անգլիացի վաճառականի մոտ: Մի օր նրա հոր քղանցքը պատահաբար դիպչում է մի պարսիկ խանութպանի ջրի բաժակին: Խանութպանը գոռում է, թե նա իր ջրամանը պղծեց, ու սկսում է նրան ուժգին գանակոծել: Գրիգորը զայրանալով երկու այլազգի ծառայակիցների հետ գնում է նրան ծեծելու: Խանութպանին ծեծում են եւ քարշ են տալիս դեպի անգլիացու տուն: Այդպես է սկսվում Գրիգորի մեղադրանքը, թե նա հայհոյել է մահմեդական կրոնը: Դա հաստատում են դատարանի վճռով եւ նրան պահանջում են անգլիացիներից: Անգլիացիները երկու ծեծող այլազգիներին հանձնում են, բայց Գրիգորին պահում են: Երբ գործը հասնում է խանին, Գրիգորին հեռացնում են, որ Ջուղայի հայրական տանը թաքնվի: Ձերբակալում են հորը, որ հայտնի որդու տեղը: Հայրը չի խեղճանում սպառնալիքից, բայց երբ երդմամբ վստահեցնում են, թե հարցաքննությունից հետո նրան բաց կթողնեն, նա մորը գրում է, որ Գրիգորը հանձնվի: Երբ Գրիգորն ընկնում է պարսիկների ձեռքը, ազատության համար նրանից պահանջում են ուրացություն: Խանը կարգադրում է միայն ծաղկել նրան: Նրան ծաղկելով պտտեցնում են քաղաքով մեկ: Բերում են հայերի շուկա, եւ այստեղ էլ Գրիգորը հայտարարում է, որ ամուր է հավատի հարցում: Մի քանի ուրացյալ հայեր նրան առաջարկում են առերես ընդունել իսլամը, բայց նա մնում է անդրդվելի: Ամբոխից նրան հարվածում են, բայց ոմանց հաջողվում է նրան փախցնել ու փակել մի սենյակում: Մոլեռանդ ամբոխը ջարդում է սենյակի դուռը եւ դաշույններով ու բրերով նահատակում նրան: Մարմինը տանում են Ջուղա եւ հողին հանձնում Երեւանի թաղի ամառային եկեղեցում: Գրիգորի նահատակությունը եղավ 1704 թվի հուլիսի 3-ին՝ Ներսեսի եւ Խադի տոնի օրը:

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր*

# Հայաստանի առաջին պարբերականը Սյունյաց աշխարհի եւ Շուշի քաղաքի մասին

Պատմական հանգամանքների բերումով հայ պարբերական մամուլը սկզբնավորվել եւ իր գործունեությունը ծավալել է հայրենիքից դուրս՝ գաղթավայրերում: 1794 թ. Մադրասում հրատարակվեց առաջին հայ պարբերականը՝ «Ազդարարը»: Դրանից հետո եվրոպական, ասիական, ռուսական բազմաթիվ հայ գաղթօջախներ ունեցան մամուլի իրենց օրգանները: Բայց հայ մամուլի զարգացումը սերտորեն կապված է արեւմտահայ եւ արեւելահայ մշակութային կենտրոններ Կոստանդնուպոլսի եւ Թիֆլիսի հետ: Հայաստանի արեւելյան եւ արեւմտյան հատվածները չունեին ո՛չ մտավոր, ո՛չ ֆինանսական ներուժ՝ նման գործ կատարելու համար: Այդ ժամանակ (19-րդ դարի II կեսին) հանդուգն ու խիզախ գավառացի մի վարդապետ՝ ծագումով Արեւմտյան Հայաստանից՝ Վանից, Կ. Պոլսի ազդեցիկ հայ գերդաստանների աջակցությամբ տեղում սկսում է հրատարակել «Արծուի Վասպուրական» ամսագիրը՝ 1855 թ. հունիս ամսին: Ամսագրի տիտղոսաթերթին գրված էր. «Արծուի Վասպուրական թռուցեալ հայրենասէր թեւօք յԱրծրունի գահէն ի Վան Տոսպ»: Անգամ այդ խոսքերը ցույց էին տալիս խմբագրի հիմնական նպատակը՝ ամսագրի հրատարակությունը շարունակել հայրենի Վանում: 1855 թ. հունիսից մինչեւ 1856 թ. հունիսն ամսագիրը կանոնավոր հրատարակվում է Կ. Պոլսում: Վերջին՝ թիվ 12-ում խմբագիր Մկրտիչ Խրիմյանը հայտնում է ընթերցողներին, որ «Արծիւը» թռիչքը շարունակելու է հայրենի Վասպուրականի վանքերից մեկում, այդ պատճառով ժամանակավորապես դադարեցնում է ամսագրի հրատարակությունը: Կ. Պոլսի Օտյան եւ Այվատյան ազդեցիկ գերդաստանների աջակցությամբ, հայոց պատրիարքի կոնդակով եւ Բ. Դռան ֆերմանով Մ. Խրիմյանը դառնում է Վանին մերձակա Վարագա վանքի վանահայրը: 1857 թ. մարտ ամսին վանահայրը դնում է տեղի «Ժառանգաւորաց» վարժարանի հիմնաքարը, իսկ օգոստոսի 1-ից սկսվում են դասերը: Վարժարանի աշակերտներից խմբագիր վանահայրը պատրաստում է տպագրական գործի մասնագետներ՝ գրաշարներ եւ բանվորներ: Տարի ու կես անց՝ 1858 թ. հունվար ամսին, վերսկսվում է «Արծուի Վասպուրական» ամսագրի հրատարակությունը, որը Հայաստանի տարածքի առաջին պարբերականն էր: Այն լույս էր տեսնում Կ. Պոլսում ստեղծված «ԱրծուաՆուէր» ընկերության հավաքած միջոցներով: Դրան գումարվում է նաեւ Վասպուրականի «երեւելի եւ հայրենասէր» անձանց հավաքած դրամը: 1858 եւ 1859 թվերին կանոնավոր լույս է տեսնում ամսագրի տարվա 12 համարները: Սակայն հանգանակած գումարները վերջանում են: Նյութական միջոցների պակասությունն ստիպում է խմբագիր վանահորը «տարին մեկ վազել» Կ. Պոլիս՝ տեղի մեծահարուստներից օգնություն խնդրելու: Ամսագրում լույս տեսած խմբագրական հոդվածներում Մ. Խրիմյանը գանգատվում է դրամական միջոցների պակասությունից, ընթերցողներից ներողություն է խնդրում, որ ամսագիրն անկանոն է լույս տեսնում, հայտնում է, որ ինքն ու վարժարանի սաները ե՛ւ ամսագրի հրատարակիչներն ու բանվորներն են, ե՛ւ հողի մշակները՝ երկրագործները: Վանքի հասույթները չէին ծածկում ոչ մի ծախս: Խմբագիրը խորհում էր. «Աղքատութեան հարկն ստիպող է... ամեն պարագայի մեջ կը խոնարհեցնէ ու կը պզտիկցնէ բարձրաթռիչ արծիւն, մինչեւ նայինք երբ պիտի ժիր ազգասէրի մը ձեռք, իր թեւերուն



*«Ազդարար» հանդեսի ժողովածու*

ույժ տալով, միշտ իր թռիչքները բարձրութեան մէջը պահէ»: Այդպես էր մտածում Մ. Խրիմյանը՝ ամեն անգամ Կ. Պոլիս գնալով. նա հոգնել էր տարին մեկ այնտեղ մեկնելուց եւ ազգայիններին ձեռք պարզելուց: Երկար մտորելուց հետո նա որոշեց ձեռնարկել մի այլ ճանապարհորդություն, այս անգամ՝ Արեւելյան Հայաստան: 1860 թ.՝ ամսագրի երկու համար հրատարակելուց հետո, դադարեցնում է նրա հրատարակությունը եւ նոյեմբերի 10-ին իր մտերիմ գործընկերների ու սաների հետ (Գարեգին Սրվանձտյանց, Հրաչյա Սեւիկյան, Երեմիա Տեւկանց) մեկնում է Արեւելյան Հայաստան: Սկզբում նրանք ժամանում են Էջմիածին, արժանանում Կաթողիկոսի ջերմ ընդունելությանը, նրանից կոնդակ ստանում հանգանակություն կատարելու համար: Արեւելյան Հայաստանի ամբողջ տարածքում, մշակութային նշանավոր կենտրոններում Խրիմյանի խումբը հարաբերություններ է հաստատում տեղի ժողովրդի, մտավորականության ներկայացուցիչների, հոգեւորականների հետ, իսկ եկեղեցիներն ու վանքերը դառնում են հայրենաշունչ քարոզների վայր: Երեւանը, Թիֆլիսը, Սյունյաց աշխարհը, Շուշին ու Ղարաբաղը, դրանց վանքերը հյուրընկալում են հայրենասեր եւ հայրենախոս Արծվին ու իր մտերիմներին: Տեղի պարբերական մամուլը («Կռունկ հայոց աշխարհի», «Մշակ», նաեւ Կ. Պոլսի «Մեղու») հոդվածներ են տպում Խրիմյանի քարոզների մասին: Այդ ընթացքում կատարվում են հանգանակությունները, որին արեւելահայությունը ջերմ մասնակցություն է ցուցաբերում: Մեր խնդիրը չէ անդրադառնալ Խրիմյանի եւ նրա համախոհների ամեն մի վայրում գտած ընդունելությանը: 1860 թ. նոյեմբերին սկսված ճանապարհորդությունն ավարտվում է 1861 թ. հուլիսի կեսին՝ 16-ին, երբ նա արդեն Վանում էր, ապա ՝ Վարագում: Ճանապարհորդությունից հետո վերսկսվեց «Արծուի Վասպուրականի» հրատարակությունը, ընդլայնվեցին ամսագրի տարածման շրջանակները: Նրա շրջագայած կենտրոնները դարձան ամսագրի բաժանորդները: Ավելի լայնացավ ամսագրի քննարկվող հարցերի ընդգրկումը: Խմբագրի գրած հոդվածներում սկսեցին քննարկվել համահայկական հրատապ խնդիրներ: Ջերմ ընդունելություն գտավ նաեւ ամսագրի փոխխմբագիր Գարեգին Սրվանձտյանցի՝ ամսագրում լույս տեսած հոդվածների շարքը՝ «Երեւան քաղաք», «Տփխիս քաղաք», «Սիւնեաց աշխարհ եւ Շուշի քաղաք» խորագրերով՝ հերթականությամբ լույս տեսնելով 1861 (թիվ 1, 3 եւ 4) եւ 1862-1863 թթ. (թիվ 4):

*Շարունակությունը՝ էջ 4*

# Հայաստանի առաջին պարբերականը Սյունյաց աշխարհի եւ Շուշի քաղաքի մասին

Սկիզբը՝ էջ 3

Այդ հոդվածներն այսօր էլ չեն կորցրել իրենց այժմեական հնչեղությունը եւ հետաքրքրությունը, քանի որ նրանց միջոցով մենք հաղորդակցվում ենք 150 տարի առաջ կատարված իրադարձություններին, տեղեկանում մեր հայրենիքի տարբեր վայրերի կացությանը, ծանոթանում այդ ժամանակաշրջանում հայությանը հուզող խնդիրներին: Այստեղ ընթերցողի ուշադրությանն եմ ուզում ներկայացնել Սրվանձտյանցի «Սիւնեաց աշխարհ եւ Շուշի քաղաք» հոդվածը: Այն ուշադրություն է գրավում մի քանի հանգամանքներով. Վարագի խումբը Ղարաբաղում հանգրվանել է երեք ամիս: Այդ ընթացքում նրանք լավ ճանաչել եւ ուսումնասիրել են երկիրը, հաղորդակցվել տեղի նշանավոր գործիչների հետ: Հոդվածագիրը Ղարաբաղը ներկայացնում է իբրեւ Սյունիքի անբաժան մաս՝ փոքր Սյունիք, այդ պատճառով է երկիրը ներկայացվում իբրեւ Սիսական աշխարհ՝ Գեղամ նահապետի որդի հայկազուն Սիսակի անունով: Իրեն հատուկ ոճով Գ. Սրվանձտյանցը նկարագրում է երկրի բնական գեղեցկությունները՝ վեհապանծ լեռները, դալարախիտ վայրերը, գյուղերի գեղեցկությունը, գյուղացիների կյանքը: Հեղինակը հատուկ շեշտում է, որ երկիրը նշանավոր քաղաքներ չունի, բայց ամեն մի գյուղ ունի իր անմատչելի բերդն ու դղյակը, որոնք ճարտարապետական արվեստի անկրկնելի նվաճում են: Ափսոսանքի մեծ զգացումով հեղինակը նշում է, որ բնության եւ մարդու ձեռակերտ բազմաթիվ հուշարձաններ ավերակ են, թափուր, անմարդաբնակ: Մարդու կողմից կառուցված կոթողների շարքն են դասվում քրիստոնեական բազմաթիվ վանքերը: Հեղինակի ուշադրության կենտրոնում են Ամարասն ու Գանձասարը, ուր եղել են «ինքնուրոյն մետրոպոլիտներ եւ Աղուանից կաթողիկոսներ», որոնց մեծագործությունների վկայություններն են հետագա սերունդներին հասած ճարտարապետական կոթողները:






Սրվանձտյանցը նշում է նաեւ, որ այդ վանքերից յուրաքանչյուրը եղել է հարյուրից ավելի գյուղի սեփականատեր: Նշելով նաեւ Խութա վանքի անունը՝ հոդվածագիրը հավելում է, որ նրա սեփականությունն այնքան մեծ էր, որ երկու օր հազիվ կշրջագայվի, իսկ իր այնտեղ եղած ժամանակ վանքը չուներ միաբանություն, ոչ էլ՝ վարդապետ: Հեղինակը ցավով է հավելում, որ տեղի քրդերը սեփականել են վանքը, բայց Շուշիի հասարակությունը, մեծամեծները տքնում են «այս ազգային անգին աւանդը իր կորստենէ ազատել»: Շեշտելով եւ ընդգծելով տեղի հայության «ազատասիրութեան հոգին եւ նահատակութեան պատրաստակամութիւնը»՝ Սրվանձտյանցը ցավով է նշում, որ ժամանակին ազատության համար պայքարող այս ժողովուրդը հետագայում գերության օրեր շատ է տեսել: Իր ընթերցողներին նա հիշեցնում է «հարիւր երեսուն տարի առաջ» տեղում ծավալված ազատագրական պայքարի մասին՝ տալով Դավիթ Սյունեցու (Բեկի) եւ մելիքների անունները: Հատուկ ընդգծելով Ղարաբաղի մելիքների մղած պայքարը՝ Սրվանձտյանցը մելիքություններն անվանում է «ազնվապետական կառավարութիւն կամ նախարարական դրութիւն»՝ նրանց համարելով հայկական պետականության յուրահատուկ դրսեւորումներ: «Սիւնեաց աշխարհը, որ է Ղարապաղ, հինգ մելիքութիւն ուներ, բաժանեալ հինգ գաւառներու վերա, որք էին Ջրաբերդ, Գիւլիստան, Վարանդ, Խաչեն եւ Դուռաղ (Դիզակ), սոքա տիրապետութիւն կամ ինքնագլուխ կառավարութիւն ունէին... զորքեր ունէին եւ կռիվ կանէին»: Գ. Սրվանձտյանցն արեւմտահայ ընթերցողին տեղեկություններ է հաղորդում մելիքներ Մեջլումի, Աբովի, Շահնազարի, Ալլահվերդիի, Բախտամի մասին եւ կսկիծով հայտնում, որ այս մելիքների օրով «Իպրահիմ խան չարագործ պարսիկն... իշխեց ողջ Ղարապաղին, տիրեց եւ Շուշվա բերդին»: Նա ափսոսանքով է նշում, որ այդ պատմությունը լիովին չգիտի, միայն հավելում է, որ ռուսական տիրապետության ժամանակ այլեւս մելիքություններ չկան Ղարաբաղում, բայց նրանց ժառանգներն ազնվականության տիտղոս ունեն եւ մի քանի գյուղերի սեփականատեր են: Հոդվածում մանրամասն նկարագրվում է Շուշի քաղաքն իր բերդով, որը կառավարության նստավայրն է. այդտեղ են գտնվում քաղաքապետը, ազգապետ իշխանք, դատավորք, զորք: Տեղացիներից բացի, Շուշիում ապրում են Ագուլիսից, Մեղրիից, Ղազանչիից գաղթածներ: Ամբողջ բնակչության զբաղմունքը նշվում են վաճառականությունն ու առեւտուրը, ընդգծվում է, որ այդ բնագավառում նրանք «ճարտարութիւն եւ հաջողականութիւն ունին»: Այդ պատճառով էլ նրանք իրենց զավակներին դեռ փոքր հասակից կրթում են առեւտրի եւ հաշվապահության մեջ: Այդ հանգամանքը վշտացնում է հեղինակին, քանի որ նոր սերունդը մյուս առարկաներից մնում է անգետ: Հոդվածում նկարագրվում են Շուշիի բնական դիրքը, լեռները (Քիրս եւ Խալի), նրանց միջով հոսող գետերը: Անառիկ դիրքի համար Շուշիի հիմնադիրները (հայերը) քաղաքն անվանել են բերդ, տաճիկները (թուրք-թաթարները)՝ «Շուշի ղալա», իսկ ռուսները՝ «կրեբոստ»: Չնայած լեռնային դիրքին, ձորամեջին եւ զառիվայրին, նույնիսկ թմբերի վրա բնակիչները կառուցել են միահարկ, երկհարկ եւ եռահարկ տներ՝ կրաշաղախ եւ կոփածո քարերով: Քաղաքում հոսող ջրեր չկան, այլ միայն ջրհորներ, որոնց մի մասի ջուրը «քաղցր եւ բարեհամ է», իսկ մյուսներինը՝ դառն ու աղի: Սրանք օգտագործվում են շինարարության համար: Խմելու ջուրը հարուստները գնում են ջրավաճառներից, աղքատները խմում են ջրհորների ջուրը եւ բավականին առողջ են: 150 տարի մեզնից առաջ՝ 1860-61 թվերին, Գ. Սրվանձտյանցը մանրամասն նկարագրում է Շուշի քաղաքը: Ըստ այդ նկարագրման՝ քաղաքը բաժանվում էր երկու մասի. ներքին կողմում՝ ձորի մոտ, բնակվում էին տաճիկները, իսկ երկրորդ մասում ապրում էին հայերը, որը բաժանվում էր չորս թաղի: «Տաճիկների» (թուրքերի) մոտի թաղում ապրում էին գաղթած ագուլիսցիները, ովքեր կառուցել էին խաչապսակ երեք գմբեթավոր մայր եկեղեցին՝ Սուրբ Աստվածածին անունով: Երկրորդը Ղազանչեցոց թաղն էր, ուր գտնվում էր սրբատաշ քարերով շինված միագմբեթ ամենափրկիչ եկեղեցին: Երրորդը զառիվայրի վրա գտնվող Մեղրեցոց թաղն էր, որը ժողովուրդն անվանում էր «կյավուր ղալա»: Այդ թաղում էր գտնվում հանգուցյալ Բաբա Հախումյանի միջոցներով կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին: Չորրորդը վերաբնակիչների թաղն էր, ուր խառն ապրում էին հայեր եւ թուրքեր. այն կոչվում էր Ներքին թաղ: Այդտեղ կար նորաշեն Սուրբ Հովհաննես հայկական եկեղեցի, որի կառուցման ծախսերը հոգացել էր պարոն Հովհաննես Հովհանյանը՝ ի հիշատակ վաղամեռիկ եղբայր Մկրտչի: Մեղրեցոց եւ Ներքին թաղի միջեւ գտնվում է դարձյալ Սուրբ Աստվածածնի անվան մի «կուսանոց մենաստան», որը կառուցվել է մայրապետ Հռիփսիմե Բահաթրյանի գումարներով: Սրվանձտյանցը գրում է նաեւ կայսերական ուսումնարանի մասին, որտեղ հայերն ու տաճիկները (թուրքերը) ուսանում են խառը: Հոդվածագիրը հատուկ շեշտում է, որ Շուշիի բարոյական, հոգեւոր-մտավոր կյանքը վերելք է ապրում՝ քաղաքի երկու պանծալի հիմնարկությունների շնորհիվ. գրատուն (նկատի ունի գրադարանը) եւ Ազգային հոգեւոր ուսումնարան (ամենայն հավանականությամբ՝ թեմական դպրոցն է): Երեք ամիս Շուշիում ապրած, իր ուսուցչի հետ տեղի հայության հարգանքն ու մտերմությունը վայելած Սրվանձտյանցը գրում է, որ տեղացիների ամենամեծ հոգսը լավ ուսումնարան ունենալն է:

Շարունակությունը՝ էջ 5

# ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ ՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ էջ 2

Տաճարը հաստատված է վեց կլորակ քարե սյուների վրա: Մեջտեղում սյուն ու հենարան չկան: Եկեղեցու ներքին շրջապատը զարդարում են այն վեց սյուները, որոնց վերեւի գլուխները հրաշակերտ արվեստով բարձրանում ու խառնվում են հսկա կամարին: Նույն տիպի կամար է կազմում նաեւ տաճարի առաստաղը: Այս երկու կամարների կենտրոնական ուղղությամբ՝ դեպի դուրս, շինված է միջին մեծությամբ երկու կաթողիկե՝ առանց զանգակատան, որոնցից համեմատաբար ավելի մեծը 1877-1878 թթ. վերանորոգել է Եղիազար վանահայրը: Վանքը շրջապատված է պարիսպներով ու աշտարակներով, ներսում ունի միաբանության ու հյուրերի համար սենյակներ:



Ս. Բարթողիմեոս վանքի դռան վրա պատկերված է Հայր Աստծո պատկերը՝ ըստ Եզեկիել մարգարեի տեսիլքի՝ առյուծներով ու հրեշտակներով շրջապատված, իսկ մի քիչ ներքեւ փորագրված է ս. Բարթողիմեոս առաքյալը՝ տեգը ձեռքին, որով սպանում է երեխաներ ուտող վիշապին: (Ըստ ավանդության՝ Վասպուրականի քարայրներից մեկում մի վիշապ օձ է ապրելիս եղել, որը փակել է գետի աղբյուրը ու գյուղի բնակչությանը զրկել խմելու ջրից: Գյուղացիներն ամեն օր մի երեխա են բերել վիշապի մոտ, որ նա ուտի, եւ այդ ընթացքում նրանք կարողացել են ջուր վերցնել: Մի օր էլ մի կին իր միակ փոքրիկ աղջկան տանում էր վիշապի մոտ, եւ ճանապարհին հանդիպում է Բարթողիմեոս առաքյալին: Վերջինս, իմանալով վիշապի մասին, վերցնում է երեխային ու մոտենում քարայրին: Երբ վիշապը դուրս է գալիս, առաքյալը տեգով հարվածում ու սպանում է վիշապին: Հետագայում այս քարայրում վանք է կառուցվում): Փորագրված են նաեւ վանքը կառուցող չորս ճարտարապետների պատկերները՝ հասակով մեկ, որոնց մեջտեղում է պատկերված ս. Հովհաննես Մկրտչի գլուխը, որի երկու կողմերում կանգնած են բուրվառակիրներ:

Թեեւ Ս. Բարթողիմեոս վանքը շատ հին պատմություն ունի, բայց մինչեւ ԺԴ դար վանքի գործունեության մասին, ցավոք, մեզ ոչինչ չի հասել: Մեր ունեցած տեղեկություններն սկսվում են ԺԴ դարից՝ Ավետարանների, Հայսմավուրքների եւ այլ գրքերի հիշատակարանների շնորհիվ: Ս. Բարթողիմեոսը եղել է Աղբակի թեմի եպիսկոպոսանիստ աթոռը:

Վանքում գրվել են Հայսմավուրքներ, Ավետարաններ, «Շարակնոց», «Ոսկեփորիկ» եւ այլ գրքեր:

1715 թ. երկրաշարժից ավերվել է Ս. Բարթողիմեոսի գմբեթը: 1751 թ.՝ Կիրակոս վարդապետի վանահայրության տարիներին, վանքի աջ թեւը վերանորոգվել է, որը վնասվել էր երկրաշարժից: Ս. Բարթողիմեոսը 1897 թ. դարձյալ երկրաշարժից տուժել է. քանդվել է տաճարի պատը:

Ս. Բարթողիմեոս վանքն ունեցել է շատ նվիրական սրբություններ. ս. Բարթողիմեոսի ծնոտը, որը մի սնդուկի մեջ դրված՝ թաղել են, եւ աջը:

Ս. Բարթողիմեոսը հարուստ է եղել ոչ միայն ավանդություններով ու սրբություններով, այլ նաեւ նյութականով: Վասպուրականի հարուստ ու ժողովրդի կողմից սիրված վանքերից մեկն է եղել: Վանքն իր ենթակայության տակ է ունեցել գյուղեր, ագարակներ, հանդեր, արտեր, արոտատեղիներ ու անտառներ: Որոշ ժամանակ վանքում վարժարան են բացել, որը 1915 թ. փակվել է: Չնայած վանքի նյութական ապահովությանը՝ այստեղ գիտությունը, համեմատած Վասպուրականի մյուս վանքերի հետ, չի զարգացել: Վանքն այժմ գտնվում է ավերված վիճակում:

ՀԵՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

2011, ԴԵԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 23 (355), ԷՋ 6

Կից սենյակում

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

# «ԱՆԻՐԱՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԵՎ ԱՅՐԻ ԿՆՈՋ ԱՌԱԿԸ»

**Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ**

**- Աստծո արքայության, մեսիական 2-րդ գալստյան մասին խոսելուց հետո Հիսուսը, ըստ Ղուկասի, «մի նոր առակ» է մեջբերում՝ հենց սկզբից պարզաբանելով, թե ինչ նպատակով է պատմում: Այն է՝ ամեն ժամ պետք է աղոթել ու չձանձրանալ:**

- Այո՛, սա ավետարանական այն առակներից է, որն իր հետ «աչքակից» բացատրություն ունի: Տերն առակը պատմելուց հետո, լսողների խնդրանքով, տալիս է մեկնությունը: Կարծում եմ՝ այնքան էլ կարեւոր չէ առակի իմաստը նախօրոք կամ հետո բացատրելու հանգամանքը: Այս առակի մեջ գլխավորն այն է, ինչ Հիսուսն ասաց սկզբում, այսինքն՝ հրահանգը, պատգամը՝ հարատեւ եւ անձանձիր աղոթելու մասին: Իսկ առակը պատմեց՝ այդ պատգամն ավելի պատկերավոր դարձնելու համար: Ասաց. «Մի քաղաքում մի դատավոր կար. Աստծուց չէր վախենում եւ մարդկանցից չէր ամաչում: Եվ նույն քաղաքում մի այրի կար, որ գալիս էր նրա մոտ եւ ասում. «Իմ ոսոխի դեմ իմ դատը տե՛ս» (Ղուկ. ԺԸ 2-3):

Նախ պետք է հասկանալ՝ ով էր դատավորը, եւ ով էր այրի կինը:

Այն, որ դատավորն անիրավ էր, հայտնի է նախ առակի վերնագրից, եւ հետո՝ ի՞նչ մի զարմանալի բան կա. բոլոր ժամանակներում էլ եղել են անիրավ դատավորներ, իսկ մեր օրերում՝ ինչքան ուզես... Բայց այս մեկը ոչ միայն անիրավ էր, այլեւ շատ ինքնավստահ ու «հաջողակ», այն առումով, որ, ինչպես ժողովուրդն է ասում, «մեջքը պինդ էր»: Այլապես այդչափ համարձակ ու հանդուգն չէր լինի, որ անընդհատ մերժեր այրու արդար դատն իրագործել ոսոխի դեմ: Սա, ուրեմն, ոչ միայն անիրավ էր, այլեւ՝ կաշառակեր, եւ որ ամենակարեւորն է՝ ո՛չ ամոթ ուներ, ո՛չ վախ, այսինքն՝ խիղճ չուներ, ինչը հենց ինքն էլ խոստովանում է առակում եւ շատ հանգիստ էլ ասում է՝ առանց խղճի խայթի, ուղղակի փաստն արձանագրելու պես: Եվ այրու դատն էլ երկար ժամանակ քաշքշելուց հետո ի վերջո լուծում է ոչ թե արդարության մղումից կամ խղճի խայթից դրդված, այլ միայն այն բանի համար, որ այդ կինն իրեն հոգնեցրել էր՝ անընդհատ դռները բախելով: Իր մտքում ասում է. «Թեեւ Աստծուց չեմ վախենում եւ մարդկանցից չեմ ամաչում, բայց այն բանի համար, որ այրի կինն ինձ հոգնեցնում է, նրա դատը տեսնեմ, որպեսզի անընդհատ չգա եւ ինձ չանհանգստացնի» (Ղուկ. ԺԸ 4-5):

Իսկ ո՞վ էր այրի կինը. ամուսնուց զրկված, միայնակ, անպաշտպան մի կին: Այսքանն էլ բավական չէր՝ նաեւ ոսոխ ուներ, ով շարունակաբար նեղում էր իրեն: Այսինքն՝ որեւէ լծակ չուներ ազդելու դատավորի վրա եւ որեւէ կերպ իր արդարությունն առաջ տանելու: Սակայն, չունենալով ոչ մի լծակ, այրին այնուամենայնիվ չդիմեց զարտուղի եւ սխալ քայլերի, այլ գնաց արդար ճանապարհով: Եթե «տրամաբանորեն» մոտենանք, այրի կինը կարո՞ղ էր այլ ճանապարհով գնալ: Իհարկե՝ կարող էր. հազար ու մի ճանապարհ կա, եւ շատ այրիներ (ու ոչ միայն այրիներ) չեն խորշում հնարավոր ու անհնարին միջոցներ գործադրելուց՝ իրենց նպատակին հասնելու համար: Եվ մեղքը ծնում է մեկ այլ մեղք, ու այսպես շարունակ...

Դատավորը հանցանք էր գործում՝ այրի կնոջ արդար դատը չլուծելով: Այրին նույնպես իր նպատակին հասնելու համար



կարող էր մեղքի մեջ հայտնվել, բայց կարող էր նաեւ առաքինության մեջ մնալ: Այրին ընտրեց վերջինը՝ արդարության ճանապարհը: Ո՞րն էր այդ ճանապարհը: Ըստ առակի՝ դա կարելի է ձեւակերպել այսպես՝ դիմեց, դիմեց, հոգնեցնելու չափ խնդրեց, մինչեւ անիրավ դատավորը տեղի տվեց: Հասկանալի է, որ դիմելն ու խնդրելը այլաբանորեն աղոթքն են խորհրդանշում, իսկ անդադար խնդրելը՝ հարատեւ աղոթքը: Հասկանալի է նաեւ, որ առակի անիրավ դատավորն Աստծո «նախատիպը» չէ: Տերն անիրավ դատավորի օրինակն է բերում՝ համեմատելու եւ առավել պատկերավոր ու հասկանալի դարձնելու համար. եթե մի դատավոր, որն անիրավ էր, կարող է տեղի տալ այրի կնոջ խնդրանքներին, ուր մնաց Աստված՝ ամենողորմ Տիրակալը տիեզերքի: Մի՞թե Նա արդարություն չի անի Իր այն ծառաներին, որոնք գիշեր ու ցերեկ աղաղակում են (հմմտ. Ղուկ. ԺԸ 6-7):

Ուրեմն՝ պետք է հարաժամ աղոթել ու չվհատվել, չհոգնել, չձանձրանալ: Երբ մենք աղոթք ենք բարձրացնում առ Աստված, հաճախ մտածում ենք, թե անմիջապես պիտի մեր խնդրանքը կատարվի: Ու երբ չի կատարվում, շատ արագ վհատվում ենք: Այս դեպքում անիրավը մենք ենք. նախ՝ որ շատ շուտ հոգնեցինք ու վհատվեցինք, եւ երկրորդ՝ ի՞նչ իմանանք՝ մեր օգո՞ւտն էինք խնդրում, թե՞ վնասը: Մենք միշտ պետք է մտածենք՝ Աստծո ողորմության տնօրինությունն է, որ մեր խնդրանքը չի կատարվում կամ ուշանում է:

Իսկ ընդհանրապես հարաժամ աղոթքը բարիք է խնդրողի համար, այն էլ՝ կրկնակի բարիք: Տեսեք՝ երբ մենք աղոթում ենք Աստծուն, աղոթքն ինքնին մխիթարություն եւ բարիք է մեր հոգու համար, որը կարգավորում ու ազնվացնում է մեր ներքնաշխարհը՝ պարգեւելով խաղաղություն մեր հոգուն: Եվ եթե, օրինակ, մենք աղոթում ենք մեր ննջեցյալ հարազատի հոգու համար, մեր շարունակական աղոթքը նախ հենց մեզ է օգուտ բերում, որովհետեւ մեր սրտերը լցվում են մխիթարությամբ, եւ ուրեմն՝ մեր ողջ կյանքի ընթացքում այս աղոթքը մեզ բարիք բերեց, իսկ ահեղ դատաստանի օրն էլ՝ մեր ննջեցյալներին:

**- Տե՛ր հայր, կարծում եմ՝ ամեն մարդ էլ աղոթում է, անշուշտ՝ յուրովի: Ոմանց համար աղոթքը հանապազօրյա հաց է, ոմանք էլ դեպքից դեպք են հիշում Աստծուն, հիմնականում՝ նեղության պահերին: Աղոթքի մեջ հարատեւել նշանակում է մշտապես աղոթական վիճակի մեջ լինել. այս դեպքում աղոթական վիճակը մարդու համար դառնում է կենսակերպ: Այդպես հնարավո՞ր է:**

- Մշտապես աղոթական վիճակի մեջ լինելը չի նշանակում միայն աղոթել եւ ուրիշ ոչինչ չանել: Այո՛, աղոթական վիճակը, աղոթքի մեջ հարատեւելը կենսակերպ է իսկական բարեպաշտ քրիստոնյայի համար, ով ոչ թե պարզապես աղոթք է ասում, այլ ամեն ինչում առաջնորդվում է Տիրոջ պատգամներով, այդ թվում՝ աղոթական կեցվածքի, աղոթքի բովանդակության եւ առհասարակ աղոթքին ու խնդրվածքներին վերաբերող բոլոր հարցերում: Աղոթքի մեջ հարատեւությունը չափազանց կարեւոր առաքինություն է: Աղոթքից հոգնողը, խնդրելուց ձանձրացողը, փնտրելուց վհատվողը նման է մի մարդու, ով մի օգտակար գործ է կատարում եւ հետո հարվածելով փշրում իր արածը: Իհարկե միայն նեղության մեջ աղոթելը նույնպես ճիշտ չէ. Աստծո անունը փառաբանությամբ ու օրհնությամբ պետք է հիշել միշտ՝ ե՛ւ նեղության մեջ, ե՛ւ հաջողության կիզակետին:

Շարունակությունը՝ էջ 7

# ԲԱՐԻ ՍՐՏԻ ՆՇԱՆԸ ՑՎԱՐԹ ԴԵՄՔՆ Է...



Երկնքի ու երկրի Արարիչ Աստված Աստվածաշունչ Մատյանում բազում ստորոգելիներով է բնորոշվում՝ մարդասեր, ողորմած, անոխակալ, գթած, ներողամիտ, անհիշաչար, բարեգութ... Բարի ու մարդասեր է Աստված Իր արարչության հանդեպ, քանզի հայրական անքննելի սիրով ու հոգատարությամբ խնամում եւ հոգ է տանում Իր ստեղծած զարմանահրաշ աշխարհը՝ սկսած կենդանական աշխարհից մինչեւ արարչագործության թագ ու պսակ հանդիսացող մարդը՝ չնայած վերջինիս խոտոր ու ապերասան ընթացքին: Բոլոր դարերում ու ժամանակներում էլ մարդկության պատմության մեջ եղել են, այսպես ասած, «բարության մարմնացումներ», մարդիկ, որոնք լինելով հողեղեն ու մահկանացու՝ ապրել են իրենց «պանդխտության ժամանակը» իբրեւ ճշմարիտ քրիստոնյաներ, իբրեւ «Աստծո ընտրյալ անոթներ»՝ նմանվելով բարության Աղբյուրին՝ իրենց փափագելի Արարչին, քանզի բարի մարդն Աստծո պատկերն է երկրի վրա: Այսպիսիների գոյությունը մեզանում մեկ անգամ եւս եկել է փաստելու այն պարզ ճշմարտությունը, որ Աստված մարդուն ուղղամիտ ու բարի է ստեղծել, բայց մարդիկ չար խորհուրդներ փնտրեցին (տե՛ս Ժողովող Է 29): Մեղքն է սեւացնում մարդու հոգին, իսկ չարիքի մեջ անզղջում մնալով՝ մարդը եղծում է իր բարոյական նկարագիրը, կերպարը, կորցնում իր աստվածատուր մաքրությունն ու ազնվությունը: Եվ թեեւ «մեղքով սեւացածը հնարավոր է արտասուքներով, զղջումով ու ապաշխարությամբ լվանալ», այնուամենայնիվ, այս չար աշխարհում՝ համատարած չարիքի ու անօրենության մեջ, բարության բարձր պատվանդանին մնալը շատ դժվար է, բայց ոչ՝ անհնարին: Բարության առաջին սերմերը, թերեւս, մարդը ստանում է ընտանիքում՝ քրիստոնեական դաստիարակության շնորհիվ: Ես կասեի՝ երեխայի դաստիարակությունն սկսվում է մինչծննդյան շրջանից եւ շարունակվում արդեն ծնվելուց հետո: Երջանիկ են բարության եւ սիրո անկեղծ մթնոլորտում լույս աշխարհ եկած մանկիկները, որոնք մայրական անխարդախ կաթի հետ ստանում են նաեւ քրիստոնեական կրթություն եւ դաստիարակություն, քանզի Աստվածաշունչ Մատյանի ստվարածավալ էջերը ողողված են բարության ու ներողամտության, անհիշաչարության՝ այնքան թանկագին խրատներով, որոնք մանկան մատաղ հոգում սերմանելով՝ ծնողները հետագայում արժանանում են վայելելու իրենց սերմանածի քաղցր եւ հյութեղ պտուղները: Թեեւ, դժբախտաբար, մեր օրերում մի շարք առաքինություններ, այդ թվում եւ բարությունը, համարվում են ժամանակավրեպ եւ ոչ կարեւոր մարդ անհատի կյանքում, սակայն, բարեբախտաբար, ճշմարիտ քրիստոնեական ընկալում, հոգեւոր տեսողություն ունեցող շատ մարդիկ շարունակում են իրենց զավակներին կրթել ու դաստիարակել բարոյականության դասերով, քրիստոնեական արժեքներով, որոնք երբեք ժամանակավրեպ չեն կարող լինել: Այսօր էլ մեր կողքին ապրում են ճշմարտապես առաքինի եւ բարի մարդիկ, որոնց՝ Աստծով մաքրված հոգիներում տեղ չունեն նենգությունն ու ատելությունը, մախանքն ու չարակնությունը, ովքեր թեեւ երբեմն ընդվզում են իրենց բարի էության դեմ, որովհետեւ հաճախ են հալածվում մարդկանցից՝ բարի լինելու համար, սակայն երբեք չեն կարող այլ կերպ ապրել իրենց կյանքը, չեն կարող չարին չարով հատուցել ու թշնամու դեմ դավ նյութել, չեն կարող, քանի որ այլ կերպ են դաստիարակվել, այլ՝ ավելի վերմարդկային արժեքներ են կրում իրենց մեջ, քանի որ չեն կարող հակադրվել իրենց խղճին, Ում հետ ուզում են հաշտ ապրել... Այո՛, այսօր մեր կողքին ապրում են այսպիսի մարդիկ, որոնց համար խղճի, բարոյականության օրենքից վեր օրենք չկա եւ չի կարող լինել: Նրանք հավատում են, որ Աստված ամենատես է ու արդարադատ, գիտեն, որ չկա ոչինչ գաղտնի, որ չհայտնվի, եւ ծածուկ, որ չիմացվի, ուստի ապրում են այս ժամանակավոր կյանքն իրենց խղճի հետ հաշտ: Եվ թե որքան դժվար է բարի հոգու տեր մարդու համար այս աշխարհում ապրելը, աշխատավայրում ու դրանից դուրս տարբեր մարդկանց հետ շփվելը, պատկերացնել կարելի է, սակայն ինչպես խոստովանում են վերջիններս, չեն ափսոսում, որ այդպիսին են էությամբ, որ այդպիսի դաստիարակություն են ստացել, որ փորձում են հնարավորինս առաջնորդվել սուրբգրային պատգամներով, որովհետեւ չկա ոչինչ ավելի քաղցր, քան մաքուր խղճով ու խաղաղ հոգով երեկոյան գլուխը բարձին դնելը: Բարի մարդուն Աստված զորացնում է, ուժ տալիս իր երկրավոր կյանքում՝ խոչընդոտները հաղթահարելու համար: Բարի ու ազնիվ մարդու պաշտպանը Տերն է, Ով միշտ նեցուկ եւ օգնական է լինում նրան՝ կյանքի տարաբնույթ փորձությունների մեջ: Այդպիսի մարդը վարձատրվում է Աստծուց ե՛ւ այս կյանքում, ե՛ւ հանդերձյալում, քանզի Տերը խոստացավ հատուցել յուրաքանչյուրին՝ ըստ իր գործերի:

Շարունակությունը՝ էջ 8

# ԱՆԻԻ ՈՍՏԱՅՆԱՅԻՆ ՄՆԱԿՈՒՅԹԸ

Ժողովրդական ավանդույթների վերհանման, ազգային ոճի պահպանման ու վերարտադրության տեսակետից կարեւոր նշանակություն ունի միջնադարյան կիրառական արվեստի ստեղծագործությունների եւ դրանց ակունքների ուսումնասիրությունը:

Հայ ժողովրդի պատմությունը լի է ողբերգական իրադրություններով, եւ չնայած հարատեւող աննպաստ պայմաններին՝ ժողովրդական ստեղծագործության թելն իսպառ չի կտրվել: Եթե երկրի մի մասում ժողովրդի ստեղծագործությունը ժամանակավորապես դադարել է, ապա այն վեր է բարձրացել երկրի մի այլ հատվածում կամ երկրից դուրս՝ գաղթավայրերում:

Մատենագրական, պատմական աղբյուրներն այդ տեսակետից առանձնապես հիշատակում են Բագրատունյաց թագավորության հարստությունը: Խոհեմ դիվանագիտությամբ, ռազմական որոշակի ուժի ստեղծման շնորհիվ՝ Բագրատունիները պայմաններ ստեղծեցին համեմատաբար խաղաղ կյանքի, քաղաքների եւ բազմաճյուղ արհեստների ու առեւտրի զարգացման համար:

Քաղաքների առաջացման եւ զարգացման համար առավել բարենպաստ տնտեսական եւ քաղաքական նախադրյալներ կային Հյուսիսային Հայաստանում:

Քաղաքական տեսակետից եւս հայտնի է, որ երբ Հայաստանը 9-րդ դարի վերջերին անկախություն ձեռք բերեց, ազատագրվեցին երկրի ոչ թե բոլոր տարածքները, այլ միայն Հյուսիսային Հայաստանը, Վասպուրականը եւ սրանց կից որոշ գավառներ: Ամենախոշոր պետական միավորումը Բագրատունիների գլխավորությամբ առաջացավ Հյուսիսային Հայաստանում, որտեղ եւ ավելի լուրջ նախադրյալներ ստեղծվեցին տնտեսական զարգացման եւ քաղաքների աճի համար:

5-9-րդ դարերում, լինելով Հայաստանի մայրաքաղաքը, Դվինը, սակայն, չդարձավ Բագրատունիների թագավորության կենտրոնը: Այս թագավորության հիմնական բազան Շիրակն էր, որտեղ եւ առաջանում է նոր մայրաքաղաքը՝ Անին: Թագավորանիստ կենտրոն դառնալը (961թ.) նպաստեց քաղաքի զարգացմանը: 10-րդ դարի վերջին Անին արդեն խոշոր քաղաք էր, որը եթե, իբրեւ արհեստագործության եւ առեւտրի կենտրոն, չէր անցել Դվինից, ապա ետ էլ չէր մնում նրանից:

Անիի պեղումները ցույց են տալիս, որ այստեղ առավել զարգացած արհեստներից էին շինարարական արհեստները, դարբնությունը, զինագործությունը, պղնձագործությունը, կավագործությունը, հասարակ (անջնարակ), ջնարակված խեցեղենի եւ





բարձրարվեստ հախճապակու արտադրությունը: Կարեւոր տեղ էին բռնում նաեւ մանածագործությունը եւ գրչության արվեստը:

Արհեստագործության եւ առեւտրի խոշոր կենտրոն դարձած այս քաղաքում կային շուկաներ, եւ ըստ երեւույթին՝ դեռեւս 10-11-րդ դարերում գոյացել էին արհեստավորական եւ առեւտրական շարքեր, որոնց վերաբերյալ տեղեկություններ մեզ հասել են 13-րդ դարից:

Առեւտրի հետ կապված՝ գոյացել էին նաեւ իջեւաններ եւ հյուրատներ: Այսպիսով՝ Անին դեռեւս 10-րդ դարի վերջերին եւ 11-րդ դարի 1-ին կեսում հանդիսանում էր Մերձավոր Արեւելքի քաղաքային խոշոր կենտրոններից մեկը:

Գործվածքների արտադրությունը միջնադարյան Հայաստանում արհեստագործության առավել տարածված եւ զարգացած մի ընդարձակ ճյուղ էր, որի համար անհրաժեշտ պայմաններ ընձեռում էին երկրի տնտեսությունն ու բնակչության պահանջները:

Բրդից, բամբակից, վուշից, կանեփից, մետաքսից գործվածքներ արտադրելու արհեստը միջնադարյան Հայաստանում հայտնի է եղել մի շարք անուններով: Ժողովրդի մեջ առավել գործածական եղել է «կտավագործություն» տերմինը, իսկ արհեստավորը կոչվել է «կտավագործ», որը եւ տեղ է գտել առակների մեջ, օրինակ՝ Մխ. Գոշի մոտ: Գրական լեզվի մեջ ավելի գործածական է եղել «ոստայնանկություն» տերմինը, դրան համապատասխան արհեստավորն էլ կոչվել է «ոստայնանկ»: Հին է նաեւ «անկվածագործություն» տերմինը: Հայաստանի բնական հարստությունը, թելերի, ներկերի առկայությունը նպաստել են ոստայնանկության գունազարդ գործվածքների արտադրությանը: Սկսած հին դարերից՝ Անիում արտադրվել են բազմազան հարթ, միագույն եւ զարդահյուս գունավոր գործվածքներ: Միջնադարը հայտնի է եղել զարգացած ոստայնանկությամբ՝ ոստայնանկ ջուլհակներով, կտավագործներով, ասվագործներով, մետաքսագործ-կերպասագործներով, դիպակագործներով եւ այլն: Բացի տեղական արտադրանքից՝ գործվածքներ են ներմուծվել նաեւ ուրիշ երկրներից:

Հ. Մանանդյանը Հայաստանի միջնադարյան քաղաքներում զարգացած արհեստների թվում ամենախոշոր նշանակություն վերագրում է ոստայնանկությանը: Այն զարգացած էր Հայաստանի բոլոր քաղաքներում, սակայն նրա խոշորագույն կենտրոնն էր Անին:

Միջնադարյան Անի քաղաքի պեղումների ընթացքում դամբարաններից հայտնաբերվել են բազմազան գործվածքների պատառիկներ: Դրանք Հայաստանի գործվածքների իսկական նմուշներ են, որոնք հողի տակ պահպանվել են դարերի ընթացքում: Այդ պատառիկները գաղափար են տալիս 10-13-րդ դարերի զարգացած ոստայնանկության մասին:

Ըստ հնագետ Կ. Գ. Ղաֆադարյանի՝ «Մի քանի անգամ գտնվել է ոսկեթել բանվածքի մնացորդ՝ խիստ քայքայված վիճակում, եւ մի անգամ էլ՝ կոպիտ կտավ՝ միջնաբերդի գագաթին»:

Հնագիտական պեղումները որոշ նյութեր են տվել Անիի գորգագործության մասին: Գորգի մնացորդներ Անիում գտնվել են Բագրատունիների պալատում, ինչպես եւ Տիգրան Հոնենցի՝ Ծաղկոցաձորի քարայրային տոհմական դամբարանում՝ 1907 թ.:

Բագրատունիների պալատում գտնվել է նաեւ կարպետի մի կտոր, սակայն դժվար է դրանից որոշակի գաղափար կազմել:

Անիի պեղումների ժամանակ գտնվել են նաեւ մետաքսե նուրբ գործվածքներ: Բավականաչափ մեծ է կարմիր եւ բաց դեղին գույնի այն մետաքսե նուրբ գործվածքների թիվը, որոնք փակցվել են միջնադարյան ձեռագրերի կազմերի տակ եւ դրա շնորհիվ հասել մեզ:

Մետաքսագործությունը կազմում էր ոստայնանկության առանձին ճյուղ, եւ մետաքսի գործվածքներ արտադրողը՝ իբրեւ ինքնուրույն արհեստավոր, հիշատակված է Անիի 1276 թ. վիմագիր մի արձանագրության մեջ, որտեղ ասվում է, թե «Բալէն ապրեշմագործ»-ը հարկահանտամղաչիի պաշտոն էր ձեռք բերել: «Ապրեշմագործ» բարբառային ձեւից բացի՝ կա նաեւ «մետաքսագործ» գրական ձեւը, ըստ որում՝ տրվում է եւ նրա հյուսած գործվածքի անունը՝ «մետաքսագործ կերպասի», որը հանդիպում ենք Գրիգոր Մագիստրոսի, Հովհան Երզնկացու քերականության գրքերում:

Բացառիկ նշանակություն ունեն Անի քաղաքի գործվածքները, որոնք պահպանվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում: Այդ պատառիկների մեջ հանդիպում են մետաքսյա մի քանի տեսակ ճերմակ կտորներ՝ գործված բարձր վարպետությամբ, հասարակ կտավ, սեւ գույնի նրբագույն շղարշ, որի վրա ոսկեթելերով ասեղնագործված են գազանների պատկերներ: Մանկական հագուստները կարված են մետաքսյա գործվածքից, իսկ գլխաշորի տակի ճերմակ կտորը, որի վրա կարմիր մետաքսաթելերով ասեղնագործություն է կատարված, իր վրա ունի նույն գույնի նախշեր՝ բանված հենց գործելու ընթացքում: Անիի թե՛ ասեղնագործության եւ թե՛ գործվածքի թելերը բազմազան են՝ մանված տարբեր հաստությամբ. ոսկեթելը ոսկեմանյալ է՝ մետաքսաթելն ու ոսկեթելը համատեղ մանված: Կտավի հաստ ու բարակ թելերից երեւում է թել մանողների հմտությունը: Նույնը պետք է ասել թելեր ու կտորներ ներկելու մասին: Ճերմակ, կարմիր ու սեւ ներկված գունավոր գործվածհյուսված գործվածքները ցույց են տալիս, որ ոստայնանկություն-ջուլհակությունը, կերպասագործությունը, ներկարարությունը Անիում զարգացած արհեստներ են եղել:

Բագրատունի Սմբատ Ա թագավորը, զորեղ դիմադրություն կազմակերպելով 10-րդ դարի սկզբին Հայաստանի վրա հարձակված Էմիլ Յուսուֆի դեմ, հարկադրում է նրան հաշտություն կնքել եւ մեծամեծ նվերներ ստանալով՝ ինքն էլ նվերներ է տալիս նրան: Դեպքերին ժամանակակից Հովհաննես կաթողիկոսը գրում է, թե թագավորը Յուսուֆին նվիրեց «Երեւելի զարդս հանդերձանաց եւ նկարակերտ կազմուածս բազմականաց կարմրութեամբ որդանց եւ ըմբակս եւ նուագս. եւ կամար ի համակ ոսկւոյ՝ գործ հռոմայական ճարտարաց, յերգանս գունակ ապակւոյ»:

1001 թ. ավարտվում է Անիի հոչակավոր կաթողիկեի կառուցումը, եւ Կատրանիդե թագուհին այս տաճարը, ինչպես ասում է պատմիչը, «զարդարեաց ի զարդ ծիրանեծաղիկ, ոսկեթել նկարագործ անկուածոց, արծաթեղէն եւ ոսկեղէն անօթոց եւ բազմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ, որովք ջահանայք ըստ երկնային կամարին կաթողիկէն սուրբ, որ ի քաղաքին Անւոյ»: Այստեղ անկվածը ոչ միայն ոսկեթել է ու ծիրանածաղիկ, այլեւ նկարագործ, այսինքն՝ վրան նկարված են եղել զանազան պատկերներ:

Ոստայնանկության պատմության համար բացառիկ նշանակություն ունեն գործվածքների մեզ հասած, թեեւ սակավ, նմուշները: Անիում գտնվել է վերմակի կտոր՝ նուրբ գործվածքից, որի մեջ բամբակ էր դրված ու կարված:

*Շարունակությունը՝ էջ 8*

---

Կից
***սենյակում***

## ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

# «ԱՆԻՐԱՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԵՎ ԱՅՐԻ ԿՆՈՋ ԱՌԱԿԸ»

### Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

*Սկիզբը՝ էջ 6*

Մեր Տեր Հիսուս Քրիստոսը սովորեցրեց Տերունական աղոթքը, սովորեցրեց ինչպես աղոթել, նաեւ հարաժամ աղոթքի պատգամը տվեց, որի մեկ օրինակն է այս առակը: Պատահական չէ, որ անցյալում մեր եկեղեցում օրվա ընթացքում 9 ժամերգություն է եղել: Շատերին սա կարող է տարօրինակ թվալ, բայց օրվա կեսից ավելին աղոթքի ժամ է եղել: Հասկանալի է՝ սա վանական մթնոլորտն է եղել, սակայն այս երեւույթը նաեւ շատ լուրջ ուսուցում է բոլորիս համար. երբ ուսումնասիրում ենք , տեսնում ենք, որ յուրաքանչյուր ժամ իր շնորհն ու խորհուրդն ունի, եւ մարդիկ հարաժամ այդ շնորհի մեջ են եղել:

**- Աղոթքը, ուրեմն, շնորհ է, հետեւաբար աղոթական վիճակն էլ, թերեւս, իրական վայելքի վիճակ է: Իսկ եթե աղոթքը վայելք չէ, այլ զուտ քրիստոնյայի՝ կենցաղավարության կանոնների մի պարտադիր մաս:**

- Աղոթքի մեջ հարաժամ վայելքը մարդկային հոգեվիճակի կատարյալ տեսակն է: Սակայն անհնար է եւ ճիշտ էլ չէ նման «պահանջներ» դնել աղոթողի առաջ: Ինչո՞ւ. որովհետեւ հնարավոր չէ, որ աղոթելիս միշտ նույն զգացողությունն ունենանք: Եվ ընդհանրապես վայելք կոչվածը զգացողություն է, որը կարող է փոփոխական լինել մարդու սրտում...

**- Խոսքս «էքստազի» մասին չէ, տե՛ր հայր, այլ բնականաբար՝ սիրո մասին:**

- Հասկանալի է: Բայց ամեն դեպքում դա զգացողություն է, որը կարող է փոփոխվել: Ասածս այն է, որ քո աղոթքը երբեւէ չպիտի կախված լինի քո փոփոխական զգացողություններից, ուրախ կամ տխուր վիճակից: Անկախ այդ ամենից՝ յուրաքանչյուր մարդ պարտավոր է իր կյանքի բոլոր օրերում խոսել Աստծու հետ, փառաբանել Աստծուն եւ իր կյանքն անցկացնել աղոթքի մեջ:

**- Եկեղեցու հայրերի բնորոշմամբ՝ աղոթքը հոգու կերակուրն ու շնչառությունն է: Ուրեմն՝ կարելի՞ է ասել, որ չաղոթող մարդու հոգին էլ մեռած է:**

- Իհարկե՛: Շունչ չունեցող մարմինը կարո՞ղ է կենդանի լինել: Նույնն էլ՝ հոգին. եթե կա Աստված, եթե մարդու սրտի մեջ հավատք կա, ուրեմն կա աղոթք: Իսկ եթե չես աղոթում, չկան Աստծո նկատմամբ փառաբանություն, աղոթք ու խնդրանք, ուրեմն մեռած է քո հավատքը, մեռած է եւ հոգիդ:

Թող Աստված օրհնի Հայ Առաքելական Սբ Եկեղեցու զավակներին՝ Սուրբ Հոգով լցնելով նրանց սրտերը եւ հարաժամ աղոթողներ դարձնելով՝ ի փառս Ամենասուրբ Երրորդության: Ամեն:

*Հյուրընկալեց*
*Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

